Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

ԳԻՆՆ Է 10 Կ. ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ 12 Կ. 1909, Շաբաթ, Ապրիլ 11-ին. ԹԻՖԼԻՍ. №15




ՀԱՅԵՐՍ ԿՈՒԼ ԵՆՔ ԳՆՈՒՄ...

## ԱԳՐՈՆՈՄ ԱՒ. ՍԱՀԱԿԵԱՆԸ




Եկել է այն եզրակացութեան, որ մորեխով պէտք է մորեխ ոչնչացնել։ Ուստի և ստանալով 40000 րուբլի պատերազմական ծախսերի համար, սկսել է Գանձակի նահանգում ահռելի մորեխային պատերազմ։ Եւ այժմ մեր զօրապետները լաւ են։

## ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ



—Իսկ ես յամենայն դէպս, կրկին այն համոզմունքի եմ, որ ոճրագործները յաճախ յանցանք են գործում անգործութիւնից և սոված լինելու պատճառով։

—Է՜հ դուք էլ բան էք սովորել և կրկնում էք անգործութիւն, սով և այլն։ Դա ճիշտ չէ։ Օրինակ հէնց ես, ես տարիներով անգործ եմ, ամեն օր էլ ուտել եմ ուզում, բայց և այնպէս պարոններ, ես երբէք գողութիւն չեմ անում։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

„ԽԱԹԱԲԱԼԱ"

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մոսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала".

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala".

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

# ՄԵՐ ԿԱՐԻԿԱՏՈՒՐԱՆԵՐԸ

## ՀԱՅԵՐՍ ԿՈՒԼ ԵՆՔ ԳՆՈՒՄ...

Հայերս կուլ ենք գնում եւ դա վաղուց հաստատուած բան է, որ հայը եւ այն էլ կուլտուրական հայն, աւելի շատ է իր ազգայնականը՝ լեզուն, կրօնը, սովորութիւնները եւ այլն կորցնում, քան թէ այդ նկատելի է նոյն իսկ մեզանից յետ մնացած ազգերի եւ ժողովրդների վերաբերմամբ։

Եւ այդ կուլ գնալու դէմ կռիւ են մղում, մեր երկու ջուխտ եւ մի կէնտ գրողները, իրենց գրւածներով եւ հայատառ թերթերն իրենց ստաբամոլ խմբագիրներով։

Իսկ փաստը այն է, որ կուլ գնացողները երբեք ոչ հայերէն գիրք են կարդում եւ ոչ հայ լրագրի երես տեսնում, որովհետեւ հայերէն գ ի ր ք չ կ ա յ կ ա ր դ ա լ ո ւ ա ր ժ ա ն ի, իսկ լրագիրները միայն հայհոյանք են գրում։

## ՕՐՄԱՆԵԱՆԻ ՀԱՇՒԵՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Օրմանեան սրբազանը, որ 12 տարի Կ. Պոլսի պատրիարգ է եղած եւ այդքան ժամանակամիջոցում անհագին գումարներ է հաւաքած, յօգուտ զանազան բարենպատակ հիմնարկութիւնների, անիրգանաց սինիճն զանեց խուժանի կողմից, թուք ու մրի ենթարկւեց... որովհետեւ իբր թէ Սուլթանի կամակատարն է եղած ու հաւաքած գումարներն էլ մսխրաքարդել է։

Որովհետեւ նա «լ ա վ ր է ն տ է» (??)

Այժմ, ինչպէս տեղեկացնում են Պոլսոյ թերթերը, ex—պատրիարգը մանրամասն հաշիւ է ներկայացնում Պոլսոյ ազգային ժողովին. իսկ ժողովը չէ էլ ուզում լսել ծերունազարդ հովւապետին։

Շատ կարելի է որ Օրմանեանը Սուլթանի կամակատարն է եղած եւ նրա սիրելին ու փողերի գողը եւ այլն եւ այլն, բայց քանի որ նա հաշիւ է ներկայացնում եւ պահանջում, որ քննութեան առնւին նրա գործունէութիւնն ու դրամական հաշիւները եւ երբ այդ չեն անում, նշանակում է, որ գ ո ղ ե ր պիտ լինին նոյն նրանք, որոնք իրաւունք չունին ի պաշտօնէ՝ չը հետաքրքրւելու ազգային գումարների գործածութեան վերաբերմամբ որովհետեւ ասում ենք, «գողից վատը եւ գողերին պահողն է»—կամ ուրիշ խօսքով նա, որ գողութեան անունը տալիս է իսկ ինքը իսկական հաշիւը չէ տեսնում։

Բայց հայերիս մէջ ինչ բանն է տեղին, որ այդ լինի։

---

## ՊՈԼԻՏԻԿՈՒՐԻ ՌԵՊՈՐԹԵՄԸՆ

*ՍՏԱՄԲՕԼՈՒՄԸ ԲՈՒՆՏ. ԿՕՆՍԱԼՏՈՒՑԻԷՆ ՓԱԹԵՐԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ, ՂՕՋԱՂ ՀԻԼՄԻ ՓԱՇԷՆ։*

Ստամբօլը խօ գիդէք, Ստամբօլիմէն ընենց բաներ ենք իմանում, վուր կօսիս թէ աշխրքի վերջը էկել է։

Սուլթանի անունն էլ խօ իմացել էք, (Աստուծ նրա անունը կտրի) իմացած կուլիք ի հարգէ, թէ ինչ օյինբազն ու ջաղուբազն է էլի։

Օսմանլի կօնսըլտուցիէն էլ իմացած կուլիք, բա խօ խուլ չիք. էս ուխթ ամիս աւել է, ինչ վուր Սուլթանի արնուտ էրգրում Ջէհէլ Թուրքերը կարք ու կանուն մացրին, Սուլթանի բերնին էլ լգամ գրին, լիրփ ու ժուլիկ փաշէքին, մինիստրէքին, մօլէքին ու սրանց չաշկա յօշկէքին փիս բիարուր արին, Օսմանլի հուրիէթն դուս գցեցին։ Սուլթանին կի պահեցին Ստամբօլումը իրա հարէմի հիդ, էնդուր վուր Սուլթանը խիստ օյինբազ դուս էկաւ։

Սուլթանը իրա քոփակ տիղովը, վուր մինչկի սխտանատուն տարեկան է, էլի խաբից մէր ջէհելներուն ու ասից թէ՝ եաշասըն ջիգը իս էլ ջէհէլ թուրք իմ, կօսէ։

Ջէհէլ Թուրքերը դուրթ է պակասութիններ ունէին, համա ամենքից օրինաւորը, ամենքից աղնիւը, էլի նրանք էին։

Սրանք խասակ ատկալերնիր էին։

Սրանք համ խալխի, համ էլ Օսմանլի իրգրի բարեկամնիրն էին։

Էն սուտ սուտ բաներր, քամու չաղցնիր, ասաղէ կօշկիր, (ամբողջներ) սրանք չը խոստացան խալխին, վունց էն սաին թէ, զարդադիլէն վուր անիք՝ անիրդ կու շինուի, վունց վուր միդ մօդ սատւմ էին ու վիրջն էլ դիփանիատները էլ քանդեցին, շինելու տիղ։

Չէ, սրանք մէնակ էն էին ասում, Օսմանլի հուղում ապրողներր՝ հայերը, թուրքերը, բերձէնները, թէ ջըհուդներր, քրթիրր թէ բուլղարնիրր— դակօնի առջև բարեբար պիտին ըլի ու էն գնացած տարւայ իմիխի (յուլիսի) էգնէն, գիփ էլ Օսմանցիր պիտին ըլի կօսէ։

Սրանք գիփ լաւ, համա եանդլիշ էլ էին, էնդուր վուր Սուլթանի համա մէ գլուխ «փադշի չանլի յոլ եաշա» էին բղաւիլ տալի։

Փադիշահ Սուլթանն էլ, իփ վուր տեհաւ, վուր խալխը իրեն խիստ շատ շատ ու շատ շատ յօլ յօլ է տառւմ, փիքր արից՝ արի կօսէ, մէ դուրթ վուր չօքչօքավարի սրանցի տամ, կօսէ, էգերա իմ հնուց ադաթնիրը էլի թազացնիմ, կօսէ։ Սուլթանը արնի ծառու էր, վա հէր օրհնածնիր, մարթը, Աստու ստիղծած մարթը, մէ էրկու իրէք օր գինի վուր խմում է, հարփիլ է սովրում, մէկը մէ քանի ջէր պապիրուզ վուր քաշում է, սովորութք է անում, «Գուրձը» վուր սովրից սուսն ու մինձ մինձ խօսկուն, թարգ չի անում, «Մշակը» մէ գլուխ էն է տառւմ, թէ իս Արծունովի ծնունդն իմ, կօսէ. Մէարափ վարթապիտը ինչ ուզի տափ, համա չի կանայ տափ, թէ ինքը օրինաւոր վարթապիտ է, Սուրէնովը սովրիլ է պամպուլութին, էնենց էլ

կու ճայ, Գարեգին Լեւոնովը մէ վուր ռավրիլ է... յիգ չի կանում կաղնի, Կոստա Խատիսովը, չունքի շատ սախր գիդի, ու Բաքւում վուր քամի է վիկենում, հէնց գիդի թէ ինքն է խոսում, Մէլիք Ազարովը վուր փախցած է, մէ գլուխ ձեռնիրը ջիբն է դնում, պորտմանը դայիմ պահում. Սպանդարը վուր սիվութին շատ է սիրում մէ գլուխ էրիսը սեւցնում է, Համբարցում Առաքելովը կարթալիս, մէ բան վուր հանում է, ինչախնէէթ միրատր միկայնում կարում է ու կարծում է թէ ինքն է գրի, Սամսոն Արութինովը մէկի հիդ վուր խոսում է, ձեռնիրը առաչ է քաշում, հէնց գիդի թէ բարեգործականի համա փուղ ին տալի։ Աւէտիս Ահարոնովը թարթ վուր ուտում է, հէնց գիդի, թէ օջ ու կարիճ է, ու բաղ ան հնդուհաւ վուր տեհնում է, սա սիվ թռչուն է կօսէ։

Մանտաշար ում տեհնում է, հէնց գիդում է, թէ դիփ էլ իրա հանդի օկրօրօկըրանիր ին ու էլի ուրիշնիրը էս թաւուր խասիաթւուրնիրը։

Խասիաթը, ուրիշ բան է խասիաթը։

Մաշ։

Սուլթանն էլ էնթաւուր խասիաթ ունէր, վուր հայ արնին կարօտցիլ էր, ջէհէլ ախչկերքի ու գիղին օսկու խիստ դարդն էր քաշում, ասից՝ արի մէ արտնգի տամ կօսէ, ախց ու իրա քինթն ու պռունգը, վունց վուր ռուսն է ասում, dorղեն ջարթից։

Ջէհէլ Թուրքիրը դուրթ է քիչ շփութուեցան, չունքի տեհան վուր օրինաւոր մարթ ու պարտիս, սասայ իրենցից քիչ կայ Օսօմանի գրանիցեքում, մագրամ շուտով խիլքի ու գլաթի էկան ու դոշաղ դօշունով ու հիմի փաշով Սուլթանի ու մօլէքի լիգունիրը փուրնիրումը թուղնիլ ուխին։

Աչքն էլ հանեցին.

Մաշ վունց գիդին։

Հիմի դուզին վուր Սուլթանին տախտեմէն վեր գցին, չունքի խիստ մուռատըն է կօսէ։

Էս սահաթիս չին գիդի ինչ անին, Սուլթանի տիղ ում նստեցնին։

Հուգուբռումը Օսմանի Օսօմանի աշխրքումը մէ օրինաւոր մարթ չէ ճարցի սուլթանութենի համա ու ով վուր ունիք ձիր ճանանչնիրու մէչ էն թաւուր ախմախ, վուր էս սահաթիս դաբուլ ըլի սուլթանութենի, միկայէք ղրգեցէք Ստամբօլ, էնդի նրան Սուլթան կօնին։

Ես իմ մագիէր կու առաշարկէի միր գալավա կնիազ Ջերբեգովին, սա սուլթանութին կանայ անի, չունքի մէ մինձ խիլք հարգաւուր չէ, ով ինչ կասի, նա պիտի ձեռք քաշի նուր կանցլիտուցիով էսօղամ, չնուբք կունենայ Ջէրբեգովը։

Սա վուր դաբուլ չըլի, Սուրէնով Գէուրքն էլ լաւ է, համա ափսուս վուր արփազան է, վայ թէ չը թուրքանայ։ Համա փուղի բան չէ, ինչի չը պիտի թուրքանայ։

Խատիսով Ալէքսանդրէն էլ լաւ կուլի, համա թամադութին չի կանայ անի, չունքի Ստամբօլումը գինին դադաղա է շարիաթով։

Համա դրանց էլ վուր բրակ անին, ձմը ղրգինք։

Վա՜, ջահանդամը դրանց գլուխը, էսու համա էլ իս փիքր անիմ։ Ումը ուզում ին ջոգին, թաք էտ քաւթառ, քոփակ Արդուլ Համիդին, Ստամբօլեմէն դուս գցին, մինչկի իս Ստամբօլ չիմ գնացի։

Գասպար Կալառուզեանց

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

### ՆԱՄԱԿ ՍՏԱՄԲՕԼԻՑ

5 ապրիլ, 1909 թ.

Գասպար ջան

Միր ասը կոտրւէր, որ քաղաքից դուս չէինք էկէ. էկանք թէ չէ աաջնիրս դուս եկաւ Վրոյրը, իրա կլպած քինթ ու պռընգով, ուզեցի քարը շուռ տալ, որ չը թարաւէինք, համա էս անգէր ծովի վրեն իսկի քարի կտոր չկար։

Զարէն կտրւած գնացինք Պօլիս, ջէր ոչինչ չէինք արէ, ինչ ունէինք էն էլ ծախսել էինք, որ էստեղ խառնակութիւնները սկսւեց։

Հիմա էն ենք մտածում, թա որ էստեղ մեռնենք, ըրտեղ պէտք է թաղւենք. հայ գիդի հա՞, միր Խօջիվանք ու Օրթաճալա։

Գասպար ջան, ինչ ասեմ, դրութիւնը խիստ անորոշ է, մարդ ամառ նման մէկ թէ լաւ է լինում, մէկէլ սահաթ՝ էլ ուղղակի չես իմանում, թէ ինչ դրութիւն է։

Սուլթանը չգիտէ թէ ինչ անէ, ուզում էր Խաչլամովին Թիֆլիզից կանչել, բայց քանի որ հասկացրին թէ Խաչլամովը չի գայ, որովհետեւ Եկեղեցում արաղ չկայ, ուստի Վրոյրն է հիմա գործի ռէքը։

Մենք ճնացած գերաստանները էլի ոչինչ, լաւ ենք, իսկ Դրիշա Աւէտովը էս սահաթիս տակը..........

Քաղաքական ամենակարեւոր լուրը այս րօպէիս էլի դա է։

Ահրարները գոհրումար եղան, իսկ երիտասարդ թուրքերն էլ խիստ ջահէլ են։

Ա՜խ, ափսոս միր Շիրաշխանա։

Մի չարէք կախէթու համա հոգին կուտամ։

Էսեղ, Թիֆլիզում որ մարդ մնած ըլի, ասելի լաւ է, քանց թէ էստեղ սուլթան ըլի։

Ախպէր, չորս բոլորը ջուր է, սա էլ երկիր Է, որ ուզենաս փախչի, կը խեղդւես։

Մէ օրինաւոր գեներալ գուբերնատոր էլ չունենք։

Էս երկու շաբաթ է բունտ է ու դեռ ոչ ոքի կախաղան չեն բարձրացրել, թա սա օրէնք Է... Ափսոս միր երկիր։

Հօրուդ մեռնեմ Գասպար ջան, մի չարա արա, մեզ մի քիչ փող հաւաքի քու սակուցար «Խաթարալով», *) ու գէմուդէմ տէլեգրամով ուղարկի մեզ, ան наложни платеж-ով ուղղակի դուս գրի, խնդրում ենք մէկէլ թերթերը փող չը հաւաքեն, ինչի որ հաւաքածը իրենք կուտեն ու մենք էլի էստի կը մնանք։

Սուլթանը էս սահաթիս էստեղ է, ես էլ էստեղ եմ, Վրոյրն էլ։ Արեւմտի կնոջը ասաս, որ մարդուն շուտ տուն կանչէ, թէ չէ նա ստեղ, աստւած են թուրքութին պիտի ընդունէլու հետը հարէմ բերէ։

Մինչև փողը կը ստանանք, ջէր էլի նամակներ կը գրէմ։

Քո համփառն ու հայ ազգի գերասան
Արշակ Յարութինեան

Տպելու համար արտագրեց
Պօլիտիկօս

## ԳՈՐՏԵՐԸ ԼԱԼԻՍ ԵՆ

Նորերս Մոսկւայում, միլիօնատէր Կոնշաւալովի մօտ եղած ժողովին, որտեղ ներկայ էին և Պետական բարձրաստիճան պաշտօնեաներ՝ առևտրի և արդիւնաբերութեան մինիստր Տիմիրեազևի գլխաւորութեամբ և որտեղ քննւում էր առևտրի և արդիւնաբերութեան ներկայ անկեալ վիճակը, բուրժուա Կոնովալովը այլևս չը համբերելով այն նիւթական վնասներին, որոնց նա ենթարկւում է, վաճառականների հետ միասին պահանջում է մինիստրից արմատա-

*) Պօմոլուստա էդ թաւուր փաթերակնէրու մէջ մի ցցի միղ. մենք քիղ ինչ գէթ ինք արի, վուր ուզում իս հաւաքած փուղը փաթերակ շինի միր գլխին։
Գաս. Կալառուզեանց

ეროვნული ბიბლიოთეკა

կան ռէֆորմներ, սահմանադրական կարգերի հիմնումն Թուրքաստանում... առանց որի, ասում է Կանտակուզէն, մենք նոյնիսկ անկարող ենք համակերպուել կեանքի պահանջներին։

Փառք Աստուծոյ, որ վերջ ի վերջոյ գտնուեցան մարդիկ՝ և վաճառականներ ու արդիւնաբերողներ, ուրիշ խօսքով բուրժուաներ, որոնք նոյնպէս զգացին սահմանադրական կարգերի անհրաժեշտութիւնը, հենց իրենց արդիւնաբերողների տեսակէտից։

Այսիս մենք չենք կարող համբերել, մենք վնասւում ենք, մենք տուժում ենք, իսկ դուք, դուք, իշխանաւորներդ, տարին տասներկու ամիս մեզ խաբում էք, որովհետեւ օդը հեղձուցիչ է, այլեւս անկարելի է դիմանալ։

Եւ այս ասում է միլիոնատէրը, իսկ ինչ կասի չարքաշ գիւղացին, անգործ բանւորը, քաղցած ինտէլլիգենտը—բայց պարոն մինիստրը երբ է տեսնւում նրանց հետ։

## „Голосъ Кавказъ"-ը եւ հայերը

Վերջերս հոչակաւոր «Голосъ Кавказъ»-ը առանձին եռանդ է ցոյց տալիս դէպի հայերը։

—Թարենացին սուտ է, էջմիածինը իր տեղը չէ, ծովանկար Այվազովսկին սուտ է, Լօրիս-Մելիքովը յետին նպատակներ ունէր, Թուրքական հակայեղափոխութիւնը հայկական գործ է, հայերը կեղեքող են և այլն և այլն։

Եւ սրա հետ միասին առաջարկում է վրացիներին գնալ չարիքի դէմ, որովհետեւ, որտեղ երկու վրացի կայ և մի ռուս, հայն անպատճառ այնտեղ մարկիտանտի դուխանէ բացում։

Ամենահետաքրքիր առեղծուածներից երեւում է սակայն, որ ներկայիս դուխանչիները, բուֆէտչիկները, ռեստորանատէրերը, կուխմեյստրները և այլն և այլն-երը հայեր չեն. իսկ եթէ կան էլ մի քանիսները, դրանք էլ այնպիսի հայեր են, որպէս Голосъ Кавказъ-ի խմբագիրները օրինաւոր ռուսներ։

Ինչպէս երեւում է Վէլիչկօեան ոգին դեռ աստանում է Կովկասեան մայրաքաղաքում, միում է որ նրա աջ թեւ Ակակի Ծէրէթելին և սրա ձախ թիկունքի թեւ Վալիկօ Գունիան ձայնակցեն—Голосъ Кавказ-ին գուցէ հայրենիքը և Կովկասը ազատեն վերահաս վտանգից։

## ՀԱՅԵՐԸ ԵՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Հեռագրական լուրերը գուժում են, որ Ադանա քաղաքում հայկական կոտորած ու ջարդ է սկսել։

Փառք Աստծոյ, որ Սուլթանի այդ փափագը յաջողել է։

Փառք իրեն՝ որ Գուրիշկեւիչների մուրազը կատարուել է։

Բայց... բայց այստեղ զարմանալի ինչ կայ, հայերին ո՞վ չէ կոտորում և ե՞րբ չեն կոտորում։

Մի թէ կայ տեղ, որ նա չկոտորեն և նրանչկոտորէ խուլիգան союзникъ-ը, ֆանատիկ մաչաղին, պրաւակատոր Տակայշվիլին, արիւնարբու Սուլթանը, թէ հարազատ եղբայրը...

Եւ կոտորում են ինչի համար.

Մէկը անհաշտեցողութեամբ, երկրորդը կրօնական ֆանատիկութեամբ, երրորդը ազգայնական վրէժով գինուած, չորրորդը գահը կուզէ պահպանել, իսկ հինգերորդը պատարկազոր է և փող կուզէ դուրս կորզել, որպէսզի հեշտ միջոց ունենայ ապրելու. և բացի այդ, չէ որ նա և ազգի փրկիչ է, տէրն է, իսկ տէրը միշտ իրաւունք ունի իր հաւերին մորթելու, քէֆը ուզած ժամանակ հաւամսով կերակրելու համար, առաւել յաճախ էլ, որովհետեւ երբ ուրիշին չէ կարող յաղթել, անզէն հային հօ կարող է հաղթահան անել։

Դա հայերիս վիճակն է։

Ապատկան Եփ.

---

## ԱՍԷՔ, Ո՞Վ Է.

Հէյ, հէյ.
Ո՞ւմ էք ուզում, յօշոտեմ.
Ատամներս երկաթից,
Ճիրաններս պողպատից.
Ում որ ուզեմ, ես կ՚ուտեմ.
Աչէ-հօփ... հում տամ, կուլ տամ։

—

## ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԱՐԻ

I

—Էտ ինչ ես գրում, Մինաս։

—Կտակ եմ գրում, եղբայր, կտակ։

—Կտակ... վա՛յ, ինչ է պատահել որ... դու դեռ երիտասարդ, առողջ...

—Հենց ցաւն էլ դրանում է, որ երիտասարդ եմ ու առողջ. այդպիսիների տեղն ուրիշ տեղ է նշանակուած այժմ... ուստի և օր առաջ կտակս եմ պատրաստում։

II

—Ո՞ւր ես շտապում, Կարապետ։

—Հաղորդուելու, եղբայր։

—Դո՞ւ... հաղորդուելո՞ւ...

—Այո՛, այո... ինչ կայ զարմանալու. քրիստոնեայ չե՞մ... մինչդեռ ո՞վ գիտէ, վաղն ինչ կարող է պատահել... ամեն մի հեռագրական սիւն, կամ դիք անկեալ ծառ տեսնելուց՝ ջանս դողում է։

III

—Թիքես կուլ չի գնում, հայրիկ. բանտերը...

—Ձայնդ կտրիր, յիմար... ուզում ես գլխներիս կրակ թափել տաս... պատերն էլ ականջ ունեն, թող հալալ հաց ուտենք։

Թ.



## ԱՂՔԱՏՆԵՐ

Մոռացուած բոլորից, ընդմիշտ՝ անարգուած,
Նեխուած խուցերում, անձորձ, անմահին՝
Այդ մենք ենք բնակւում՝ մահու հետ գրկուած.
Մեզ հետ միասին՝ սարդեր ու կ՚արիճ
Խարխուլ պատերի մթին ծերպերում
Վխտում են մեղկոտ ու հեզգ և՛ թերում...
Եւ այդպէս անհուն
Օրեր են սահում...
Գիշեր՝ սրդերի ձայնից մեղամաղձ՝
Ջուլւում է մի սուգ համերգ գիւտային,
Որի ձառայից՝ յոգնած ու տանջուած
Թեղդրւում ենք մենք գերեզմանային
Քնի մէջ ու մրափում
Անզարթ, անթարթում...
Իսկ լուսաբացին, երբ մեր մթագնած
Գետնայարկերում լսում է նրանց
Երգին եղանակ՝—
Մենք այն ժամանակ՝
Տխրուած, սովագնած, ճպրոտ աչքերով,
Մերկ ու գեղեկոտ, հայիտ, անարի,
Մէջքով սապատուն ու կաղ ոտներով՝
Ինչպէս մահասփիւռ ուրուականներ
Մի հոծ կարաւան,
Շարան ու շարան
Դէպ դուրս ենք սողում, գեառնարնակ
Մեր խոռոչներից. յածում փողոցներ.
Եւ ո՜, հարուստներ, ձեր տների տակ
Մենք քարշ ենք գալիս, թափում արցունքներ
Ու չոր հաց մուրում...
Այսպէս ենք ապրում։
Ու յանկէն մահու յաղթ հարուածներից,
Ժանտ ճպուռներից մեր կեանքի մ՚ լոր,
Մե բոլէն կորգում՝ հալածուածներիս
Մե գոյութիւնը քարշ տալու համար...
Մենք շատ ենք ո՛, շատ
Եւ միշտ ենք աղքատ...
Իսկ անխիղճ մարդիկ՝ ծաղրը շուրթերին՝
Թքում են մեզ վրայ, մոլի քարկոծում
Ու շղթաներից կասպած շներին
Մշտափակ դռնից, դէպի մեզ թողնում...
...Ո՜, դուք խուլերի
Ցեցեր նողկալի,
Հազար երանի,
Թէ այդ շների
Արժէքը միայն մենք ունենայինք
Ձեր կոյր աչքերում. ու գէթ հրաշալիքով
Ձեր շէնքի տակից վերցնել թողնէիք
Առատ սեղանից ձգած փշրանքներ...

Շաւ՚ղ

---

## ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

*Մատենախօսութիւն*. Գ. Ենգիբարեան, Թիֆլիզ, տպ. որ. Ն. Աղանեանի 1909 թ. գինն է 1 ր. 25 կ.։

«Գեղեցիկ գրականութեան հետ միասին անհրաժեշտ զարգանում է և այն գրականութիւնը, որը, քննելով այդ գրականութեան արտադրութիւնները, տալիս է նրանց տեղը, թէ ազգային և թէ ընդհանուր գրականութեան մէջ. այդպիսի գրականութիւնը կրում է քննադատութիւն, բառերապականի կրիտիկա անունը»։

Հատատափոր գրքի հրատարակիչ որ. Աղանեանը այսպէս է բնորոշում իր «Երկու խօսք» յառաջաբանում Գ. Ենգիբարեանի Մատենախօսական ակնարկների մասին։

Թողել Գ. Ենգիբարեանի «Մատենախօսու-

համար ինչ տեսակի հաջաթ կայ. չունքի պրաւիզօր պարոն Շահնազարովը գալ ա, որ էտ հացերի քինաքինէն էրգզար շատ ա, որ էլ իրան ապտեկումը քինաքինա չի ծախւում։

Վրա իրեք երըորթը. Ո՞ր տեսակի միսը համով կինի. քիւռանու ոչխարինը, թէ Նոր-Բայազեդու։ Արթար եզով տապակէլ, թէ քիւրա-քեաբաբի անել։

Վրայ չորրորդը. գրա վրայ ինչ գինի կարելիս խմել, Էրեւանու գոլոմ, թէ Արտաշատու կարմիր կախէթու։

Հինգերրորթ։ Թանի որ էս բաները չեն ճարւում և ձեռ չի ընկնում, ինչ տեսակի ազգանով կարելի ա փոր կշտացնել։ Բոլին ու իրիցին ճնց խաշենք, որ համ կուշտ ուտել ըլնի, համ էլ չ գժւացնի։

Վեց երրորթ։ Էրեւանցիքս ո՞ր ջրից գործ ածենք. Նորքա ազբրի, թէ Ղրխբուլաղի։

Ի՞նչ անց կարելի ա, էտ ինչ միջոց կառնէք, որ մեր էրեւանցիք առանց ցանելու հնձել և առանց աշխատելու, ուտել կարենան։

Մեր «Հրազդան»-ը ցամաքել ա. էլ չի գալի. գրա տեղը խմբագիր պարոն Սաշա Տէր-Յակոբովն ուզում ա բռնան ցանի, չունքի էտ արհէստումը շատ գլխաւոր ա. ինչ խորհուրդ կտաք. Ղազախու ձմերուկ անի, թէ Խզնաուզայ ջաղջա։

Վրայ ութ երրորթը… էհ, եանի ինչ ասեմ, որ գիփ էլ գլխացաւանք ա ու գլուխ գալու բան չի։

Ձերումդ խոնարհութեամբ՝

**Փալանդուզ Միկօ**

## ՄԵԾ ՄԱՐԴ

—Բժիշկ Աւագեանին չէ՞ք տեսել, հոգիս դուրս եկաւ նրան փնտրելով։

—Նա մեծ մարդ է. նրան գտնելը շատ դժւար է։ Մարդը համ Բարեգործական ընկերութեան վարչութեան նախագահն է, համ դպրոցների հոգաբարձութեան նախագահն է. համ դրամատիքական ընկերութեան վարչութեան նախագահն է, համ ժողովարանի Թատրօնական կօմիտէտի նախագահն է. համ…

Էհ, լաւ. тот всзд҄ѣ, но ни гд҄ѣ և վերջացրու։

Կօջօզ

## ՏԱՆԸ ՉԷ

—Պարոն Մէլիքը տանն է. հաշիւ ունեմ.

—Ոչ, նա տանը չէ։

—Հապա ինչ անեմ, ձեզ յանձնեմ փողը։

—Փող էք յանձնելու. սպասեցէք, կարծեմ տանն է, այո տանն է, տանը։

## «ԵՐԱԶԸ—ՍՈՒՏ Է»

*(Զատկական զրոյց)*

Զատկի կիրակի էր։ Մի ջերմ ու պայծառ գարնանային օր։ Արեգակն ուրախ փայլում էր անամպ երկնակամարի վրայ և ձիւնափայլ ամպերը կարծես խաղում էին ազատ եթերքում…

Թանաքեայ տանական կերպարանք էր առացել։ Ոչ միայն Զատիկ էր այդ օրը նրա համար, այլ և մի գարնանային, յաւիտենական անմոռանալի մի պատմական օր։

Այդ օրը կատարւում էր նրա մեծ զաւակի—անմահ Խաչատուր Աբովեանի—մահարձանի բացումը։ Երկար տարիներ սրտատրոփ այդ օրին սպասող հասարակութիւնը, իրան երջանիկ էր զգում, որ անա այժմ մարմնացել էր իւր վաղուց փայփայած իղձը։

Համդէսը կատարւում էր ամենայն շքեղութեամբ և երբ հասաւ հանդիսաւոր րոպէն և արձանի վրայից վերցրին քողը, խակոյն երգիչների քառաձայն խումբը երգեց։

«Վայ էն ազգին, որ աշխարհումս անտէր ա»։

Յետոյ համարձակ և հպարտ քայլերով մօտեցաւ արձանին մի յաղթանդամ, թըխարեղ և սեւադէմք պարոն։ Թեթև գլուխ տւեց արձանին և վերցնելով իր գլխից կէս արշինանոց ցիլինդրը, բացականչեց.

«Թող այժմ ամաչի մեր բամբասասէր հասարակութիւնը, որ վերջին տարիներս շարունակ ինձ հանդստութիւն չէր տալիս և անդադար հաշիւ էր պահանջում, կարծելով թէ ես արդէն «և եա» եմ արել մեր անդրանիկ վիպասանի արձանի համար ժողոված փողերը։ Դէհ այժմ ահա թող տեսնի այս արձանը, իր ձեռքով շօշափի և միենոյն ժամանակ ամաչի ինձ բամբասելու համար։

Դեռ չէր վերջացրել նա իր ճառը, որ ոգեւորած հասարակութիւնը, իր ուսերի վրայ առաւ նրան և սկսեց պտտեցնել ար-

---

աշխատութիւնը։ Այս տանելով, նա խոնհարւեց և վայելուչ շարժւացքով դուրս եկաւ ամենակից։ Կաւալեօվը չ տեսաւ նրա երեսը, այլ միայն նկատեց ֆրակի միջից դուրս եկած նրա շապկի թևնոցները, որ մաքուր ու սպիտակ էին ձիւնի պէս։

Ի միջի այլոց, այս անընական անցքի լուրը տարածւեց ամբողջ մայրաքաղաքում և ինչպէս սովորութիւն է, առանձին յաւելուածներով։ Այն միջոցներում, բոլորի միտքը լարւած էր անընականութիւններով, մագնիսիզմի փորձերը նոր էին սկսել հասարակութեան գրաւեցնել։ Կանիւշեննի փողոցի պար եկող աթոռների պատմութիւնները դեռ թարմ էին, դրա համար էլ չպէտք է զարմանալ, որ անմիջապէս սկսեցին պատմել թէ կոլեժսկի ասեսօր Կաւալեօվի քիթը, ժամը ճիշտ երեքին զբօսնում է Նեւսկի հրապարակում։ Հետաքրքիրները ամեն օր մեծ բազմութեամբ թափւում էին այնտեղ։ Մէկն էլ ասել էր. իբր քիթը գտնւում է Իւնկերի խանութում—և Իւնկերի մօտ այնպիսի իրարանցում եղաւ, որ մինչև անգամ ոստիկանութիւնն ստիպւած եղաւ խառնւել։ Մի պատկառելի արտաքինով ու բակենբարդներով սպեկուլանտ, որ թատրոնի մուտքի առաջ խմորեղէն էր ծախում, յատկապէս այդ առիթով ամուր գի-

մացկուն նստարաններ սարքեց, որոնց վերայ հետաքրքրւող ամեն կանգնողից տասնութ կոպէկ էր առնում։

Մէկ վաստակաւոր զօրապետ, միայն դրա համար կանուխ դուրս եկաւ տանից և մեծ դժւարութեամբ անցաւ ամբոխի միջից ու տեսնելով խանութի լուսամուտում հասարակ բրդէ վերնաշապիկ և մի լիտոգրաֆիական պատկեր, որ ներկայացնում էր մի աղջկայ, գուլպան շիտկելիս, իսկ ծառի յետևից նրան դիտող բաճկոնը բաց, փոքր մօրուսով մի երիտասարդի— որ տասը տարի է այն տեղ կախւած էր, բարկացած ասաց հեռանալով։ «Ի՞նչպէս կարելի է այս օրինակ անհասկանալի և յիմար լուրերով ժողովուրդը խռովել։

Յետոյ լուր տարածւեց, որ ոչ թէ Նեւսկի հրապարակում, այլ Տաւրիկեան այգում է մայեօր Կաւալեօվի քիթն զբօսնում, որ վաղուց է նա այնտեղ է գանւում, որ դեռ երբ այնտեղ բնակւում էր Խօզրև-Միրզան, շատ էր զարմանում բնութեան այս խաղին։ Վիրաբուժական ճեմարանի ուսանողներից մի քանիսը գնացին այնտեղ։ Մէկ շատ նշանաւոր ու յարգելի տիկին, առանձին նամակով գինեց այգու վերատեսչին, ցոյց տալ իր զաւակներին հազւագիւտ երեւոյթն

և եթէ կարելի է բարոյախօսական ու օրինակելի բացատրութիւնով։

Այս տարօրինակ դէպքն ամենից շատ ուրախացրել էր. երեկոյթներին մշտական յաճախող և տիկիններին զբաղեցնողներին, որոնց պաշարն այն միջոցներին բոլորովին սպառւել էր։ Յարգելի և բարեմիտ մարդկանց մի փոքր մասը չափազանց անբաւական էր։ Մի պարոն զզւելով ասում էր, որ չի հասկանում, թէ ինչպէս այս լուսաւոր դարում կարող են տարածւել այդ տեսակ անմտութիւններ և շատ զարմանում էր, որ կառավարութիւնը դրա վրայ ուշք չի դարձնում։ Այս պարոնն, ինչպէս երեւում է, այն մարդկանց թւից էր, որոնք ցանկանում են կառավարութեանը խառնել ամեն բանի մէջ, մինչև անգամ իրանց կանանց հետ ունեցած ամենօրեայ կռիւներին։ Սրանից յետոյ… Բայց՞այստեղ արկածը նորից ծածկւում է խաւարով և վերջն ինչ եղաւ՝—վճռականապէս յայտնի չէ։

Վ ե ր ջ

ձանի շուրջը, շարունակ գոռալով.

—Կեցցէ Արովեանը, կեցցէ և Հաւաքողը…

Եւ այդ ձայնը ուժգին դղրդիւնով տարածւում էր Զանգուի ձորերում և աւելի անեղ որոտով արձագանք տալիս քարանձաւներից։

Ինչպէս շատ զօրեղ էր այդ ձայնը. նա ուղղակի ականջ էր խլացնում և երբ մէկ էլ կրկնւեց այդ կեցցէն, ես ամբողջ մարմնով ցնցւեցի. այո, ցնցւեցի և վերթափայ, և մի զարմանք և զայրոյթ. անտանելի երազ էր… և նրա տպաւորութիւնն այնքան զօրեղ էր եղել, որ ես խիստ քրտնել էի։ Ես ի հարկէ խիստ բնդամաղ եղայ, որ դա երազ էր, միայն ինքս ինձ ակնեցի սիրտ տալ մտածելով թէ.

—Չէ որ լինում են երազներ. որոնք իսկապէս բարեգուշակ են լինում և բոլորովին ճիշտ կերպով յետոյ կատարւում են։

Ես ի հարկէ շատ կուզէի իմանալ, թէ կը կատարւի արդեօք իմ այդ երազս, թէ ոչ. և ուզում էի իսկոյն ճրագ վառել ու նայել մեր «երազահանին», բայց որովհետև շատ էի քրտնած, ուստի այդ բանը թողեցի առաւօտեան և կրկին փակեցի աչքերս։

—

Սակայն կարծես ինձ վիճակւած էր այդ ամբողջ գիշերն անցկացնել «տղայլին» երազների մէջ։ Եւ ահա ես գտնւում եմ մի հեռու օտար երկրում, որը սակայն բոլորովին անծանօթ չէր ինձ. Դա սարի լանջին բուսած մի հաչակաւոր հայկական վանք էր։ Այնտեղ ես այդ օրը ժողովրդական մի մեծ հանդէս էր կատարւում։ Սակայն դա ոչ թէ մեռած արձանի բացումն էր, այլ կենդանի, ժողովրդական դպրոցի։

«Հայրիկեան դպրոց»—այդպէս էր կոչւում այդ օրւայ հանդիսի հերոսը։

Վարագի վանքը այդ օրը գրաւել էր ամբողջ հայութեան ուշադրութիւնը։ Մայր հայրենիքի սրտում ազգային, անձնազոհ գործիչների ձեռքով կառուցւել էր այդ հոյակապ դպրոցը «Հայրիկեան ֆոնդի» գումարով և այդպիսով նորից էր անմահանում Արծուի Վասպուրականին… Եւ ամենքը հիանում էին «ընկերների» այդ գաղափարական ճշմարտապահութեան և մաքրութեան վրայ. հասարակական գումարի մի կոպէկն անգամ չէր կորել, նրանք լիովին գործադրել էին որոշւած նպատակի համար։

—Բայց չէ՞ որ մի ժամանակ այնքան շատ էին խօսում Հայրիկեան ֆոնդի «հալւելու» մասին.—հարցնում էի ես առաջին պատահած մարդուն,—և «ընկերների» այդ մասին պահած գաղտնապահական լռութիւնն աւելի էր հաստատում այդ ենթադրութիւնները, իսկ այժմ յանկարծ գերեզմանից յարութիւն առան այդ թաղւած գումարները։

—Է՜, դրանք միայն զրպարտութիւններ էին. Հաջի Համբարձումի երեւակայութեան արդիւնք և ուրիշ ոչինչ,—պատասխանեց նա, յետոյ աւելի տաքանալով շարունակեց.—Եւ մի՞թէ կարծում էք, թէ այդպիսի բան թոյլ կը տային իրանց այն սոցիալական ծայրահեղ իդէալներով տոգորւած անհատները. իսկ ահա ինչպէս տեսնում էք, նրանք խօսքի տակ չմնացին և հենց որ մամուլի մէջ սկսեց յուզւել «Հայրիկեան ֆոնդի» հարցը, նրանք անմիջապէս ձեռք զարկեցին այս հոյակապ դպրոցի շինութեան։

Նա ինչպէս երևում էր, պատրաստ էր դեռ երկար խօսել այդ հարցի մասին, բայց իմ ուշադրութիւնս արդէն դարձել էր դէպի հանդէսը։ Երկրագնդի ամեն ծայրերում ցրւած հայերի կողմից եկած պատգամաւորները հերթով մօտենում էին ամբիոնին և ողջունւած երկար, շատ երկար ճառերով գովաբանում «ընկեր» գործիչների այդ մեծ գործը։ Ամենքն էլ վերջացնում էին իրանց ճառերը համարեա այս խօսքերով,

—Կեցցէ Հայրիկեան դպրոցը և կեցցեն նրա հիմնադիր անձնազոհ գործիչները։

Բայց ահա ամենից վերջում ամբիոնին մօտեցաւ մի շատ կարճ մարդ և բարձրանալով աթոռի վրայ հազիւ կարողացաւ ցոյց տալ հասարակութեանն իր դէմքը, որ նա խնամքով ծածկել էր մի թանձր դիմակով. նա այսպէս սկսեց իր ճառը.

—Կեցցէ, պարոններ, այն մարդը, որ ստիպեց «ընկերներին» մոռացութիւնից հանել Հայրիկեան ֆոնդի գումարը և գործադրել իրենց նպատակին…

Սակայն նա չկարողացաւ այլևս շարունակել իր ճառը, որովհետև ամբոխի միջից մէկը գոռաց.

—Հաջի համբարձումը. կորչի նա, կորչի…

—Ոչ, կեցցէ՛ նա, կեցցէ՛…

Աղաղակեցին հակառակ կողմից և այնպիսի մի ժխոր ու տուրուդմփոց բարձրացաւ, որ ոչ միայն խանգարեց դպրոցի բացման հանդէսը, այլ և զարթեցրին ինձ քնից…։

Արդէն լոյսը բացւել էր։ Ես շտապով վեր կացայ և առաջին գործս եղաւ բանալ «երազահանը», որի մէջ այդ օրւայ մասին գրւած էր միայն երկու խօսք։

—«Երազը—սուտ է»։

Կարճ և պարզ։ Ուրեմն մնաք բարև Արովեանի արձան և դու Հայրիկեան դպրոց…

Դ. Ն. Լ.

## ՄԵԾԱՊԱՏԻՒ Պ. ԽՄԲԱԳԻՐ *)

Թոյլ տւէք Ձեր թերթի միջոցով յայտնել խորին շնորհակալութիւնս պ. Իւան տէր Մանուչարեանին որը նւիրել է մի օրինակ 1909 թւի «Խաթաբալա» Ջիբրայէլ գաւառի Խանծաձոր գիւղի երկսեռ դպրոցին։

Ուսուցիչ նոյն դպրոցի՝
Եփրեմ Տէր-Մանուէլեան

*) Մենք էլ մեր ուրախութիւնն ենք յայտնում պ. Տէր-Մանուէլեանին, իր յայտնած շնորհակալութեան համար, որովհետև կեանքի մէջ երախտագէտ մարդ հազիւ ենք գտնում։ Խաթ. Խմբ.

## ԲԱԼԱԽԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ

(Կառավարչի կաբինետում)

Сокращенія

Կառավարիչը.—Ես կարծում եմ որ, գործակատարներից Պատւականին պէտք է պահել, իսկ Գրիգորին сократить անել։

Օգնականը.—Իսկ ես այլ կարծիք ունեմ. կարծում եմ որ. Գ.-ին պէտք է պահել.-որովհետև նա աւելի ընդունակ է գործի մէջ..

Կառավարիչը.—Այդ ինձ ես գաղտնիք չէ, բայց միք մոռանալ որ Պ.-ն մերն է իսկ Գ.-ն ոչ։ Երբ գործը վերակացուի գործ անող մարդ հեշտ կարելի է գտնել. իսկ Պատւականի նման մեզ մօտիկ և «պատուական» ծառայող դժուար։

II

Ошибка

Ծառայողը.—Պ. Կառավարիչ, ես զարմանում եմ, որ դուք ինձ ես առաջարկում էք, վերջնական հաշիւ վերցնելու։

Կառավարիչը.—Ի՞նչ արած բալամ, քեզ յայտնի է, որ գործարանը վաղուց փակւած է. գործ չկայ։

Ծառայողը.—Ախր, պ. կառավարիչ, ես գործարանի բաց ժամանակն էլ գործ չէի անում… Ես ձեր Ա…ի բարեկամն եմ…

Կառավարիչը.—Հա… Значить тутъ ошибка пройзашла. լաւ, դէ մի թեահետր կանեմ, գնա բանիդ։

Մոն-Սի

*
* *

(Թարգմանութիւն Պարսկերէնից)

Գիշերս ինձ մօտ է, սրտիս սիրածը,
Ո՜վ Տէր-Աստւած, առաւօտեան բալանիքը դու ձգիր հոր.
Ով արշալոյս, արևելքից դարձիր,
Ով գիշերային խաւար, դժբաղդիս հետ յարմարւիր։

Պանդուխտ Բազէ



## ՎԵՐՋՆԱԳՈՅՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

*(Սեփական գործակալներից)*

*Պօլիս.* Հենց որ Պարլամենտը շրջապատւած անհրաբների խմբերով ու զօրքերով, պատգամաւորներից շատերը դիմակները փոխեցին։

Իւրաքանչիւր պատգամաւոր հետը բերել էր մի քանի դիւժիւն դիմակներ։

*Պօլիս.* Նողկանքով են յիշում երիտասարդ թուրքերին, որոնք սուլթանին չհասկացան։

Երիտասարդ թուրքերը (հեռագիրը ընդհատւած է)...

*Բերլին.*—Վիլհելմը ցանկութիւն յայտնեց կարմիր Սուլթանի հետ կրկին անգամ տեսնւել և արեան վաննա ընդունել Բոսֆորի ջերմուկներում։

*Պօլիս.*—Հրամայւած է 10000 վեդրօ հայ արիւն բերել Կիլիկեան լեռներից պալատի համար։

*Դիարբեքիր.*—Քրդերը պատրաստւում են արշաւել Պօլսի վերայ, և սահմանադրութեան համար անձները զոհել։

*Պօլիս.*—Հայ յեղափոխականները միտինգներ են սարքում դաւանաբանական հարցերի առթիւ։

Ակնունին գտնում է, որ լուսաւորչական հաւատը...(հեռագիրը կտրւած է) Վռամեանը ասում է, որ ինքը չորս անգամ Եւրոպա և Ամերիկա է եղել և ոչ մի երոպացի չէ տեսել հայ-լուսաւորչական դաւանութեան։

*Պօլիս.*—Հիլմի փաշան եկաւ մօնտաժիրեան զօրքերով։ Սուլթանը պալատական խոհանոցի ծխնելոյզը մտաւ։

Հայ յեղափոխականները որոշեցին պաս չպահել. հերքելով ընդ ամէն Աստուածութեան գաղափարը։

Բոլգարացիները կաղ ու պատառ են։

*Թիֆլիզ.*—«Աւաթարալուն իր պատերազմական նաւատորմը ուղարկեց Ջրերը, մեր ընթերցողների շահերը պաշտպանելու համար։

ՑԸՑՑՐԸՐԸՐԵԻԹԻՒՆ.


О-ДЕ-ЛИСЪ № 4711

EAU DE LYs

ՍՊԻՏԱԿ, ՎԱՐԴԱԳՈՅՆ ԵՒ ԴԵՂԻՆ ԳՈՅՆԵՐԻ.

Բոլորի կողմից ճանաչւած տուալէտի միջոց

ԵՐԵՍԸ ԼՒԱՆԱԼՈՒ,

թարմութիւնը, երիտասարդութիւնը պահպանելու և երեսի պզուկները և բոլոր անմաքրութիւնները հեռացնելու համար։

ՖԵՐԴ. ՄԻՒԼՀԷՆՍ

Ферд Мюльгенсъ

Кельнъ н|Рейнѣ. отд. въ Ригѣ



ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԳԵՂԱԳԷՏ-ՆԿԱՐԻՉ

Օ. Ի. ՇՄԵՐԼԻՆԳԻ

„ԿՈՎԿԱՍԵԱՆ ՏԻՊԵՐ"

ՊՕՍՏ-ԿԱՐՏ

27 տեսակ

Պահեստը Բիխօվի

վիմագրատուն

Գօլովինսկի պրօսպ. Թիֆլիզ։





ՕԳՏԻԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ

ԱԶԴ

ԵՂԲ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Տղամարդկանց, կանանց և երեխաների պատրաստի հագուստեղէնի խանութ,

Նիկոլայեւսկի կամուրջ տուն Քամոյեւի

Պատիւ ունի յայտնելու պ. պ. գնողներին, որ

ԽԱՆՈՒԹԻ ԼԻԿՎԻԻԴԱՑԻԱՆ

սպառելուն մնում է կարճ ժամանակ,

որի համար և շտապել օգտվել հազւագիւտ դէպքից։

ՕԳՏԻԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ

ՕԳՏԻԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ

ՕԳՏԻԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ



Ամենալաւը Աշխարհում

Ամենառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յարմարութեան, շքեղ ֆասօնների և ամենալաւ գործածուող նիւթերից։

ԱՆՓԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

Ն ԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՄԻՒՆԽ ԵՒ ՎԷՅՍ

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ

ПРОВОДНИКЪ РИГА

1888

Мебельный магазинъ

**БР. ГАЛУМОВЫХЪ**,

*Мадатовская ул., противъ Александровскаго сада*

Имѣется постоянно большой выборъ:
УМЫВАЛЬНИКОВЪ: англискихъ и московскихъ.
КРАВАТЕЙ: англійскихъ, подносныхъ и мѣстной работы.
ЗЕРКАЛА: простѣночныхъ, для переднихъ и фантази
МЯГКОЙ МЕБЕЛИ: „Рококо", модернъ и др. стилей, орѣховой мягкой и вѣнской.
СТУЛЬЕВЪ вѣнскихъ всемірно извѣстныхъ фабрикъ „ТОННЕТЪ" и „ВОЙЦЕХОВА", а также дубовыхъ, спеціально для столовыхъ.
ГРОМАДНѢЙШІЙ выборъ буфетовъ, обѣденныхъ, письменныхъ, ломберныхъ и др. столовъ, комодовъ, шифоньерокъ, библіотекъ, гардеробовъ, вѣшалокъ и пр.

**Полная стильная обстановка комнатъ.**

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

*Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ շարունակում են կեղծել մեր էտիկէտները, որպէսզի սպառեն իրենց անպէտ վատ ապրանքը, գործադրելով արկղիկների և կապոցների միատեսակ ներկն ու մարկան, փոխանակ բոլորին յայտնի*

ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՍԻՄՊԱՑԻԱ 10 ՀԱՏԸ

№ 8 10 ՀԱՏԸ

5 Կ.

*Ինչպէս նաև մեր ֆիրմայի ուրիշ գլանակներ։ Մեր պ. պ. գնողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել* ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԿԱՅԻՆ *և ազգանունին*

Ն. Ի. ԲՕՂԱՐՋԵԱՆՑ և ՈՐԴԻՔ



ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԹՈՐԱՄԱՆԵԱՆԸ
ԵՒ ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԸ

*Միք. վարդապետ.*—Պ. ճարտարապետ, հայ հարուստները, ինտելիգենցիան և բանուորները որոնք շնորհակալ են քո արած գիտական աշխատութիւններով. չկարողանալով նիւթապէս օգնել, աղաչկում են քեզ իրենց հին շորերը, որպէսզի կարող լինես էլ աւել անդուլ աշխատել:

## ԹՈՒՐՔԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ
## ՕՐՄԱՆԵԱՆԻ ՀԱՇՒԵՏՒՈՒԹԻՒՆԸ (Տես բնագիր)



## ԶԱՏԿԻՆ




վիմագր. Գ. Բիւստներդիկի